Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր	
Ծրագրի անվանումը	**032101.01.06 «ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ»**
Ընդհանուր նկարագրությունը	Ծրագիրը բաղկացած է հետևյալ մոդուլներից՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական և մասնագիտական: Ծրագիրը ներառում է անհրաժեշտ դասընթացներ ընդհանուր հումանիտար, սոցիալական, մանկավարժական, հոգեբանական ոլորտներից, ինչպես նաև կամընտրական դասընթացներ, մասնագիտական և մանկավարժական պրակտիկաներ: Ուսման տևողությունը 4 տարի է՝ 8 կիսամյակ, յուրաքանչյուր կիսամյակ՝ 16 շաբաթ, ևս 4 շաբաթ նախատեսված է քննությունների համար: Ծրագիրը բազմաբնագավառ է և ապահովում է անհրաժեշտ կոմպետենցիաներ:
Ուսումնական պլանը	https://sportedu.am/wp-content/uploads/2026/04/Լրագրություն-առկա-բակալավր-25-26.pdf
Շնորհվող աստիճանը	Լրագրության բակալավր
ՈԱՇ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ
Կրեդիտները	240
Ուսուցման ձևը	Առկա
Ծրագրի տևողությունը	4 տարի
Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	470 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա.1 Նկարագրելու բնագավառի հիմնարար հետազոտությունները, տեսությունները, սկզբունքները Ա.2 Ներկայացնելու մեդիադաշտի հիմնարար հասկացությունները, գործառույթներն ու գործիքակազմը:

	Ա.3 Սահմանելու և մեկնաբանելու ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզման հիմնախնդիրները: Ա.4 Վերլուծելու տարբեր մարզաձևերի տակտիկական և տեխնիկական հնարքները, ինչպես նաև ներկայացնելու դրանք համապատասխան մարզաձևի եզրույթներով: Ա.5 Կիրառելու լրագրողական էթիկայի և ԶԼՄ օրենսդրական, հայրենական և էթիկական նորմերն ու սկզբունքները: Ա.6 Մատնանշելու մեդիաազդեցության ժամանակակից տեսությունները, համեմատելու համաշխարհային առաջատար լրատվամիջոցների գործունեությունը Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտութուններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ.1 Տարբերակելու մեդիատեքստերում առաջնային ու երկրորդական իրողությունները. Բ.2 Կիրառելու փաստերի հավաքման ու մշակման մեթոդները, փաստական նյութն օգտագործելու ըստ մեդիատեքստի ձևաչափային ընդգրկման և նպատակի: Բ.3Պատրաստելու լրատվական և վերլուծական նյութեր տպագիր, հեռարձակվող և առցանց ԶԼՄ-ների համար: Բ.4 Ներկայացնելու մարզական իրադարձությունները փորձագիտական տեսանկյունից, Բ.5 Կառուցելու մեդիատեքստը՝ թեմատիկ (մարզական) նրբությունների և առանձնահատկությունների հաշվառմամբ: Բ.6 Կիրառելու ֆիզիկական վարժություններ մասնագիտական հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովման համար: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի Գ.1 Պատշաճ կերպով բաշխելու ժամանակն ու ռեսուրսները և գտնել արդյունավետ ուղիներ խնդիրները լուծելու համար Գ.2 Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը: Գ.3 Դրսևորելու արդյունավետ թիմային աշխատանքի հմտություններ

	Գ.4 Ցուցաբերելու հասարակական պատասխանատվության և քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակ: Գ.5 Օգվելու մասնագիտական գրականությունից մայրենի և օտար լեզուներով
Աշխատաշուկան	Ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան հետագայում աշխատել՝ լրատվական գործակալություններում, ռադիոհեռուստաընկերություններում, էլեկտրոնային լրատվամիջոցներում, մարզական կազմակերպություններում, սպորտի պետական լիազոր մարմնում, ազգային օլիմպիական կոմիտեում, մարզական ֆեդերացիաներում, ակումբներում, տարբեր կազմակերպությունների հասարակայնության հետ կապերի բաժիններում՝ որպես լրագրող, լրատվության պատասխանատու: